

Ժամը 8ին:

Կիր. 12 Սեպտ.- վարչապետ Պր. Իսահակ Ռապիճի և Պաղեստինի Ազատագրման բանակի նախագահ Եսսեր Արաֆաթի միջև Ուաշինգթոնի մէջ հաշտութեան դաշինքի ստորագրութեան համար կազմակերպուած ողջերթին Պէն-Կուրիոն օդակայանի

մէջ կատարուած հանդիսութեանց ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Բշ. 13 Սեպտ.- Պ. Ա. Կ.ի կազմակերպած հանդիսութեան Արեւելեան Երուսաղէմի մէջ ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան և Գերշ. Տ. Գիսակ Եպս. Մուրատեան (Պուէնոս Այրէսէն):

ԱՄԱՌՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՄ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց կազմակերպութեան անդամներէն հինգ տղաքներ, Նիւ Եօքէն, Ֆիլատելֆիայէն և Թեքսասէն Երուսաղէմ եկան, հինգ շաբաթ մնացին և քնակեցան Ս. Փրկիչ վանքին մէջ: Իրենց ժամանակացոյցին համաձայն, ուսանեցան, այցելեցին սրբատեղիներ, ժառանգաւորաց վարժարանի ուսանողներուն հետ հինգ օրուայ շրջապտոյտ կատարեցին Տիբերիոյ լիճի և Հայֆայի և Նազարէթ քաղաքի շրջակայքը գտնուող Աստուածաշնչական վայրեր այցելելով, Ս. Փրկիչ վանքի և Ազգային

գերեզմանատան մէջ մաքրութեան գործ կատարելով, և մանաւանդ ժառանգաւոր աշակերտները պատէթայօլի խաղի մրցումին պատրաստելով: Այդ մրցումը ժառանգաւորաց խաղավայրին վրայ տեղի ունեցաւ իրենց մեկնումին նախորդ օրը, Զորեքշաբթի, 7 Յուլիս, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր և հանդիսատես ժողովուրդի ներկայութեան: Նախ ժառանգաւորներու երկու խումբեր իրարու դէմ, ապա ժառանգաւորաց խումբ մը Երուսաղէմի Հայ Երիտասարդաց Միութեան խումբին դէմ մրցումի ելան: ՀԵՄ շահեցաւ քաժակը: